ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում համայն հավատավոր Մեր ժողովրդին՝ Հաղթանակի եւ խաղաղության տոնի առիթով:

Մայիսի 9-ը, որ մեր կյանքում նշանավորվում է Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան ազատամարտում մեր ժողովրդի հաղթանակներով, Հայրենիքի պաշտպանության պանծալի խորհուրդն ունի մեզ համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցած քաջարի հայորդիք՝ նշանավոր զորահրամանատարներ ու արիասիրտ զինվորներ, անձնվիրումով ու հերոսաբար պայքարեցին հանուն աշխարհում խաղաղության հաստատման: Հայրենասեր ու քաջարի նույն ոգով մեր ժողովրդի զավակները ազատագրեցին Շուշին՝ մեծ հաղթությամբ պսակելով արցախյան ազատամարտը եւ ազատ ու անկախ ապրելու մեր ժողովրդի արդար իրավունքը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ գոհություն եւ փառաբանություն ենք առաքում Բարձրյալն Աստծուն, որ խաղաղ երկնակամարի ներքո պահպանում է մեր Հայրենիքը եւ քրիստոսասեր մեր ժողովրդին ողջ աշխարհում: Հայցում ենք, որպեսզի Ամենախնամ Տերը երկնային զորակցությամբ արդյունավորի հանուր հայության ջանքերը՝ ի խնդիր ազգային-եկեղեցական կյանքում նորանոր ձեռքբերումների, հայրենի երկրի բարգավաճման եւ հավատքով պայծառ, գիտությամբ ու մշակույթով ծաղկուն գալիքի:

Բյուր աղոթք եւ օրհնություն Հայրենի մեր երկրի պաշտպանության համար նահատակված հայորդիների լույս հիշատակին:

Թող Հայրենիքի պաշտպանության պարծանքը միշտ փայլի մեր ժողովրդի հոգում: Եւ թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, օրհնությունն ու խաղաղությունը լինեն մեզ հետ եւ բոլորի, այսօր եւ միշտ. ամեն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հավատավոր մեր ժողովրդին եւ շնորհավորում Հանրապետության օրվա տոնական առիթով:

Հարյուրամյակների ընդմիջումից հետո, կոտորածներ ու ցեղասպանություն կրած հայ ժողովուրդը հերոսական մաքառումով, իր հարուցյալ կյանքի հավատով 1918 թվականին վերստին կերտեց հայոց պետականությունը: Անկախացյալ հայրենի հողի վրա դարերի ոգորումից հետո կրկին ծածանվեց մեր պետականության դրոշը:

Այսօր, գոհություն Աստծո, մեր Հայրենիքի ազատ ու խաղաղ եզերքներում մեր ժողովուրդը ջանքեր է բերում կյանքի կոչելու իր հույսերն ու ձեռքբերումները՝ կառուցելու շեն ու բարօր երկիր եւ վերածնված Հայրենիքի շուրջ համախմբված պահպանելու, զորացնելու եւ պայծառացնելու իր աշխարհասփյուռ ազգային կյանքը:

Աղոթում ենք առ Աստված, որ շարունակական հաջողություններով ուղեկցվեն հայրենիքի բարգավաճման համար ներդրվող բարի ջանքերը, եւ աստվածասեր, ստեղծագործ Մեր ժողովուրդը խաղաղության մեջ կերտի իր լուսավոր ապագան: